

5.23. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության 2006թ. մարտ ամսվա մոնիտորինգ

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2006թ. մարտ ամսին ունեցել է հետևյալ բնութագիրը:

Օդային ավազանի որակի մոնիտորինգ: Մարտին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում տեղակայված 13 մշտական լաբորատոր դիտակայանների միջոցով:

Վերցվել է օդի 2868 փորձանմուշ, որոշվել են մթնոլորտն աղտոտող վերահսկվող նյութերի կոնցենտրացիաները:

- *ք.Երևանում վերցվել է օդի 1572 փորձանմուշ: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 1.5, ծծմբի երկօքսիդինը՝ 2.2, ազոտի երկօքսիդինը՝ 2.7, գետնամերձ օզոնինը՝ 2.1 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 4.3, տոլուոլինը՝ 2.2 անգամ: Փետրվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.4, գետնամերձ օզոնինը՝ 1.9, ազոտի օքսիդինը՝ նվազել է 1.3 անգամ:*

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում 2006թ. մարտ ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.23
Ծծմբի երկօքսիդ	0.47	0.11
Ազոտի երկօքսիդ	0.365	0.107
Ազոտի օքսիդ	0.24	0.06
Գետնամերձ օզոն	0.099	0.063
Բենզոլ	0.296	0.062
Տոլուոլ	1.308	0.213
Քսիլոլ	-	-
Էթիլբենզոլ	-	-
Քլորոպրեն	-	-

- *ք.Գյումրիում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.5 անգամ: Փետրվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի էական փոփոխություն չի դիտվել:*
- *ք.Վանաձորում վերցվել է օդի 754 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.5, ծծմբի երկօքսիդինը՝ 1.2, ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն՝ 1.9 անգամ: Փետրվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.5, ծծմբի երկօքսիդինը՝ նվազել է 1.2 անգամ:*

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում 2006թ. մարտ ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.38
Ծծմբի երկօքսիդ	0.17	0.06
Ազոտի երկօքսիդ	0.160	0.033
Ազոտի օքսիդ	0.04	0.01

- *ք.Հրազդանում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.0 անգամ: Փետրվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ:*
- *ք.Ալավերդում վերցվել է օդի 464 փորձանմուշ: Ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ն*

գերազանցվել է 10.8, ազոտի երկօքսիդինը՝ 1.2 անգամ: Ծծմբի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 2.1, ազոտի երկօքսիդինը՝ 1.2 անգամ: Փետրվար ամսվա համեմատ որոշվող նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների էական փոփոխություն չի դիտվել:

Վերահսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում 2006թ. մարտ ամսին

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ ³	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.13
Ծծմբի երկօքսիդ	1.04	0.54
Ազոտի երկօքսիդ	0.106	0.047
Ազոտի օքսիդ	0.06	0.02

- ք.Արարատում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 3.7 անգամ: Փետրվար ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.9 անգամ:

Սակերևութային ջրերի որակի մոնիտորինգ: Մարտին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է հանրապետության 33 գետերի, Կեչուտի ջրամբարի, Երևանյան և Սևանա լճերի 89 դիտակետերից: Վերցվել է 98 փորձանմուշ, որոշվել է 19-22-ական ցուցանիշ:

- **Դեբեդ գետի ավազան:** Դեբեդ, Փամբակ, Չորագետ, Մարցիգետ և Ախթալա գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել են միտրիտ, ամոնիում իոնների, ԹԿՊ₅-ի, իսկ Ախթալա գետից վերցված փորձանմուշում՝ նաև սուլֆատ իոնի ՍԹԿ-ն: Նիտրիտ իոնի ՍԹԿ-ն Դեբեդ գետում գերազանցվել է 1.8-1.9, Փամբակ գետում (ք.Վանաձորից ներքև ընկած հատվածքում)՝ 3.7 անգամ: Ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 5.4, ԹԿՊ₅-ինը՝ 1.1-1.8 անգամ: Ախթալա գետից վերցված փորձանմուշում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2, սուլֆատ իոնինը՝ 2.1 անգամ:
- **Աղստև գետի ավազան:** Աղստև և Գետիկ գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել է միայն ԹԿՊ₅-ի ՍԹԿ-ն՝ 1.1 անգամ:
- **Սևջուր գետի ավազան:** Սևջուր և Քասախ գետերից վերցված փորձանմուշներում միտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4-2.2, սուլֆատ իոնինը՝ 1.5-1.9 անգամ: Ռանչպար գյուղից ներքև ընկած հատվածքում ԹԿՊ₅-ի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.5 անգամ:
- **Հրազդան գետի ավազան:** Հրազդան, Մարմարիկ, Գետառ գետերից և Երևանյան լճից վերցված փորձանմուշներում գերազանցվել են միտրիտ, ամոնիում, սուլֆատ իոնների և ԹԿՊ₅-ի ՍԹԿ-ները: Հրազդան գետի Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքից վերցված փորձանմուշում դիտվել է ամոնիում իոնով բարձր աղտոտվածություն՝ ՍԹԿ-ն գերազանցվել է 25.4 անգամ: Վերցված մյուս փորձանմուշներում միտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.2-4.0 (Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում՝ 7.4, Գետառի գետաբերանում՝ 8.6), ամոնիում իոնինը՝ 1.5-7.0, սուլֆատ իոնինը՝ 1.1, ԹԿՊ₅-ինը՝ 1.1-1.8 անգամ:
- **Արփա գետի ավազան:** Արփա, Եղեգիս գետերից և Կեչուտի ջրամբարից վերցված փորձանմուշներում որոշված ցուցանիշները դիտվել են թույլատրելի նորմաների սահմաններում:
- **Ողջի գետի ավազան:** Ողջի և Գեղի գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել է միայն միտրիտ իոնի ՍԹԿ-ն՝ 1.2-2.8 անգամ:
- **Որոտան գետի ավազան:** Որոտան, Սիսիան, Արծվանիկ և Գորիսգետ գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել է միտրիտ իոնի ՍԹԿ-ն՝ 1.4-3.4, Սիսիան քաղաքից ներքև ընկած հատվածքում ամոնիում իոնի ՍԹԿ-ն՝ 1.5 անգամ:
- **Արաքս գետ:** Արաքս գետից վերցված փորձանմուշներում գերազանցվել է միտրիտ իոնի ՍԹԿ-ն՝ 1.6-2.8, ամոնիում իոնինը՝ 1.7, ԹԿՊ₅-ինը՝ 1.2 անգամ:

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

- **Ազատ, Վեդի և Մեղրիզես գետեր:** Ազատ գետից վերցված փորձանմուշներում գերազանցվել է նիտրիտ իոնի ՍԹԿ-ն՝ 8.0, ամոնիում իոնինը՝ 5.6 անգամ: Վեդի և Մեղրիզես գետերից վերցված փորձանմուշներում գերազանցվել է ԹԿՊ₅-ի ՍԹԿ-ն՝ համապատասխանաբար 1.5 և 1.8 անգամ:
- **Սևանա լճի ավազան:** Սևանա լճի ավազանի գետերից (Մասրիկ, Կարծաղբյուր, Վարդենիս, Մարտունի, Արգիճի, Շողվակ, Ծակքար, Գավառագետ և Արփա-Սևան ջրատար) վերցված փորձանմուշներում գերազանցումներ դիտվել են միայն Մասրիկ և Գավառագետ գետերում՝ նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է համապատասխանաբար 1.4 և 1.6, ամոնիում իոնինը՝ 1.6 և 1.2-2.1 անգամ:

Սակերևութային ջրերի աղտոտվածության վիճակը 2006թ. մարտ ամսին

Ջրային օբյեկտի անվանումը	Դիտակետի համարը	Դիտակետը (հատվածքը)	ՍԹԿ-ն գերազանցող միացությունների կոնցենտրացիաները			
			ԹԿՊ ₅ (ՍԹԿ՝ 3.0 մգ/դմ ³)	Նիտրիտ իոն (ՍԹԿ՝ 0.024 մգ/դմ ³)	Ամոնիում իոն (ՍԹԿ՝ 0.39 մգ/դմ ³)	Սուլֆատ իոն (ՍԹԿ՝ 100.0 մգ/դմ ³)
Փամբակ	2	ք.Սպիտակից 0.5 կմ ներքև	3.5	-	-	-
	3	ք.Վանաձորից 0.6 կմ վերև	3.2	-	-	-
	4	ք.Վանաձորից 4.5 կմ ներքև	3.4	0.089	2.09	-
Դերեղ	5	Մարցիգետի թափման կետից 0.5 կմ ներքև	4.0	0.042	-	-
	6	Այրում գետից 0.5 կմ վերև	4.9	0.044	-	-
	7	ՀՀ պետական սահմանի մոտ	5.4	0.045	-	-
Մարցիգետ	13	Գետաբերան	4.1	-	-	-
Վխթալա	14	Գետաբերան	4.4	-	0.46	210.0
Աղստև	16	ք.Դիլիջանից 0.5 կմ ներքև	3.2	-	-	-
Արաքս	28	Արմաշ գյուղից 0.5 կմ ներքև	3.5	0.067	0.67	-
	29	ք.Ազարակից 2 կմ դեպի հարավ	-	0.038	-	-
Սևջուր	40	ք.Վաղարշապատից 10 կմ հարավ	-	0.048	-	183.1
	41	ք.Վաղարշապատից 11 կմ հարավ-արևելք	-	0.053	-	191.3
	42	Ռանչյալ գյուղից 0.5 կմ ներքև	4.5	0.053	-	153.0
Քասախ	47	Գետաբերան	-	0.034	-	-
Հրազդան	52	Քաղսի գյուղից 0.5 կմ ներքև	-	0.034	0.58	-
	53	Արգել գյուղից 0.5 կմ ներքև	-	0.029	-	-
	54	Արգնի ՀԷԿ-ից 0.5 կմ ներքև	-	0.048	-	-
	55	Դարբնիկ գյուղի մոտ	3.5	0.178	9.90	106.4
	56	Գետաբերան	4.7	0.086	2.73	106.4
Մարմարիկ	58	Գետաբերան	3.4	-	-	-
Գետառ	59	Գետաբերան	4.9	0.206	1.71	-
Մասրիկ	63	Գետաբերան	-	0.034	0.62	-
Գավառագետ	77	Ծաղկավան գյուղից 0.5 կմ վերև	-	-	0.48	-
	78	Գետաբերան	-	0.038	0.83	-
Ազատ	79	Գետաբերան	-	0.192	2.20	-
Վեդի	82	ք.Արարատից 2 կմ ներքև	4.6	-	-	-
Մեղրիզես	90	Գետաբերան	5.4	-	-	-
Ողջի	92	ք.Քաջարանից 1.8 կմ ներքև	-	0.029	-	-
	94	ք.Կապանից 0.8 կմ ներքև	-	0.067	-	-
Որոտան	101	ք.Սիսիանից 2 կմ ներքև	-	0.034	-	-
Սիսիան	103	Արևիս գյուղից 0.5 կմ վերև	-	-	0.58	-
Գորիսգետ	107	ք.Գորիսից 1.5 կմ ներքև	4.8	0.082	-	-
Երևանյան լիճ	112	Ամբարտակից գետի հոսանքով ներքև	5.3	0.096	1.98	-